

**ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ՓԲԸ
ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ-3 ԵՆԹԱԿԱՅԱՆԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԾՐԱԳԻՐ**



Մարտ, 2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նկարագիր.....	3
2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	3
3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.....	6
4. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ	7
5. ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵՂՄՍԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....	7
6. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՍԽԵՄԱՆԵՐԸ	9
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ	10
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ.....	19

1. Նկարագիր

Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորումը (ԷՄՀԾ ԼՖ), որի համար դիմել է Հայաստանի կառավարությունը, նախատեսված է Էլեկտրահաղորդման գլխավորման ակտիվների հիմնանորոգման/փոխարինման միջոցով բարձրացնելու Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունն ու կարողությունը: Այս նպատակին հասնելու նպատակով ԷՄՀԾ ԼՖ-ն ներառելու է Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ (ԲԷՑ) Չարենցավան-3 ենթակայանի ամբողջական վերակառուցումը: 1985թ. ենթակայանը կառուցվել էր որպես 220/110կՎ ենթակայան: Այժմ ենթակայանը օգտագործվում է որպես 110/10կՎ ենթակայան և Հրագրանի ՁԷԿ-ից սկիզբ առնող 220կՎ օդային էլեկտրահաղորդման գծի (ՕԷԳ) ապամոնտաժումից հետո հիմնականում ծառայում է որպես բաշխիչ կայան շրջապատող 110կՎ ենթակայանների համար: Շահագործման հանձնելուց հետո խոշոր հիմնանորոգում չի իրականացվել: Սարքավորումների վատ վիճակը երբեմն դարձել է անտեղի անջատումների պատճառ ոչ միայն բաշխիչ բաժանորդների, այլև այլ միացված ենթակայանների համար: Հետևաբար, հաշվի առնելով Չարենցավան-3 ենթակայանի հնացած վիճակը և այս ենթակայանից սկիզբ առնող ութ ՕԷԳ-ների պատճառով ընդարձակ տարածք ընդգրկող անջատումների վտանգը, Չարենցավանում և շրջակայքում հուսալի էլեկտրամատակարարում ապահովելու նպատակով անհրաժեշտ է ենթակայանի ամբողջական վերակառուցում: Չարենցավան-3 ենթակայանի վերակառուցման նախապատրաստական աշխատանքների շրջանակում պահանջվում է Բնապահպանական կառավարման ծրագիր (ԲԿԾ):

2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Վայրը և տեղանքի նկարագիրը

Չարենցավան-3 ենթակայանը գտնվում է Չարենցավան քաղաքի հյուսիս-արևելքում: Չարենցավան քաղաքը գտնվում է Կոտայքի մարզում՝ Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Քաղաքը գտնվում է Հրագրան գետի ձախ ափին ծովի մակարդակից 1600-1700մ բարձրացության վրա:

Շրջանն ունի մեղմ կլիմա: Հուլիս ամսին միջին ջերմաստիճանը 17.7°C է, իսկ առավելագույն բացարձակ ջերմաստիճանը՝ 35°C : Հունվար ամսին միջին ջերմաստիճանը -6.2°C է, իսկ նվազագույն բացարձակ ջերմաստիճանը՝ -23°C : Միջին տարեկան ջերմաստիճանը 6.4°C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 71%, տեղումների միջին տարեկան քանակը՝ 666մմ:

Չարենցավանի տարածքն աղքատ է բուսական ծածկույթով: Գտնվելով կառուցապատված գոտում՝ ծրագրի իրականացման տարածքում կենդանական աշխարհի գոյություն չունի: Ծինարարության վայրն ունի հարթ մակերես և շրջապատված է ցորենի դաշտերով հյուսիսից և հյուսիս-արևելքից և ազնվամորու դաշտերով հարավ-արևելքից: Սրանք մասնավոր հողեր են: Հյուսիս-արևմուտքում

մարգագետիններ են, իսկ ենթակայանի արևմուտքում, հարավ-արևմուտքում և հարավում խնձորի, ծիրանի և կեռասի ծառեր և լոբու դաշտեր են: Այս մշակվող դաշտերը հանրային են, իսկ հողօգտագործումը գրանցված չէ: Ամբողջ բերքը աճեցվում է հարևան համայնքների ռեզիդենտների կողմից անձնական օգտագործման նպատակներով: Չմշակված հողերը գտնվում են ենթակայանից հյուսիս: Ամենամոտ բնակելի գոտին գտնվում է մոտ 1կմ հեռավորության վրա: Ենթակայանի պարսպից դեպի հարավ-արևելք 7մ հեռավորության վրա կա փոքր առու (ջրի հոսք):

Ենթակայանի մուտքի մոտով անցնող պետական ճանապարհը օգտագործվելու է շինարարական աշխատանքների ընթացքում հյուսիս-արևելքից տեղանքին մոտենալու համար: Կան մերձատար ճանապարհներ ենթակայանի ցանկապատի շուրջ, բացառությամբ հարավային, հարավ-արևելյան և հարավ-արևմտյան կողմերի, որոնք զբաղեցված են վերոնշյալ դաշտերով: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ լինի, որպեսզի մեքենաները ենթակայան մուտք գործեն հարավային, հարավ-արևելյան կամ հարավ-արևմտյան կողմից, ապա այդ մեքենաները հնարավոր է որ անցնեն մշակվող հողերով, ինչը կարող է հանգեցնել բերքի կամ ծառերի վնասմանը և հողօգտագործողների կողմից իրենց հողակտորների կամ այլ ակտիվների հասանելիության ժամանակավոր սահմանափակմանը: Չնայած ամբողջ շինարարական տեխնիկան և սարքավորումները պահվելու են ենթակայանի ցանկապատ տարածքում, հնարավոր են դեպքեր, երբ անհրաժեշտ լինի այն ժամանակավորապես պահել հարակից հողակտորների վրա, որի արդյունքում կարող է վնասվել այդ հողակտորների վրա առկա բերքը կամ սահմանափակվել այդ հողակտորների հասանելիությունը: Վերոնշյալ դեպքերից որևէ մեկի հավանական լինելու դեպքում ԲԷՑ ՓԲԸ կմշակի վերաբնակեցման քաղաքականության շրջանակին համապատասխանող վերաբնակեցման գործողությունների հակիրճ ծրագիր և այն կներկայացնի Համաշխարհային բանկի հաստատմանը, որից հետո այն կիրառարակի, կքննարկի ծրագրի ազդեցությունը կրող անձանց հետ, կտրամադրի փոխհատուցում և վերաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը կներկայացնի Համաշխարհային բանկին շինարարությունը սկսելուց առաջ: Կապալառուն կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցառումները վերը նշված խնդիրներից խուսափելու համար:

Ենթակայանը զբաղեցնում է 4.6 հեկտար ցանկապատված տարածքը, որն ունի հետևյալ չափերի տարբեր շինություններ (երկարություն x լայնություն).

- կարգավարական կառավարման շենք (այդ թվում գրասենյակներ և մարտկոցի սենյակ)՝ 43x13մ;
- 10կՎ սնուցման լարերի հատվածներ և դրանց հետ կապված երկու շինություն՝ յուրաքանչյուրը 37x10մ և 7x7մ չափերով:


Ենթակայանն ունի ութ 110կՎ օդային էլեկտրահաղորդման գծեր (ՕԷԳ) և երկու 110/10կՎ -250 ՄՎԱ տրանսֆորմատորներ: Տրանսֆորմատորներից մեկը չի աշխատքում 1990-ական թվականների կեսից:

Ծրագրի աշխատանքների շրջանակը

Ենթակայանի հիմնանորոգումն ու ընդարձակումը ներառելու է հետևյալը.

- 110կՎ բաց բաշխիչ սարքերի ամբողջական փոխարինումը,
- երկու 110կՎ հիմնական տրանսֆորմատորների (ՀՏՏ) փոխարինումը,
- 10կՎ բաշխիչ սարքերի և դրանց հետ կապված շենքի փոխարինումը,
- SCADA համակարգի տեղադրումը և պաշտպանության ռելեների փոխարինումը,
- կարգավարական կառավարման նոր շենքի կառուցումը
- Փոփոխական և հաստատուն հոսանքի (ՓՀ/ՀՀ) համակարգերի, այդ թվում բաշխման համակարգի, լիցքավորման ագրեգատների, փոխարկիչների և մարտկոցների փոխարինումը,
- պահակային կետի կառուցումը,
- հողակցման համակարգի վերակառուցումը,
- յուղի հավաքման համակարգի վերակառուցումը,
- ճանախարհների և մայթերի կառուցումն ու վերակառուցումը,
- Մալուխային խրամուղիների վերակառուցումը,
- հրդեհի ահազանգման համակարգի տեղադրումը և հրդեհի տեղայնացման համակարգի հիմնանորոգումը,
- պարսպի հիմնանորոգումը
- արտաքին ջրահեռացման համակարգի և կոյուղու համակարգի վերակառուցումը, և
- արտաքին լուսավորության վերականգնումը:

Այս բոլոր աշխատանքները տեղի են ունենալու արդեն գոյություն ունեցող ենթակայանի տարածքում (ինչպես ցույց է տրված պատկեր 1-ում), և ազդեցության գոտին սահմանափակված կլինի գոյություն ունեցող ենթակայանի տարածքով:



Պատկեր 1: Տեղանքի հատակագիծ

3. ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հետևյալ օրենսդրությունը սահմանում է ծրագրի աշխատանքների վերաբերող իրավական շրջանակը:

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994թ.)

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի նպատակն է ՀՀ այն գլխավոր սկզբունքները, որոնք ուղղված են մթնոլորտային օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ներգործության կանխմանն ու մեղմմանը և հասարակական հարաբերությունների կարգավորումը:

Այս օրենքի համաձայն կապալառուն պետք է քանդման և շինարարական աշխատանքներն, ինչպես նաև թափոնների փոխադրումը ու ժամանակավորման պահեստավորումը կազմակերպի այնպես, որ նվազեցնի փոշու և այլ տեսակի արտանետումները օդ:

Թափոնների մասին ՀՀ օրենք (2004թ.)

Օրենքն ապահովում է իրավական և տնտեսական հիմք թափոնների հավաքման, փոխադրման, դրանց ազատման, վերամշակման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդկանց կյանքի ու առողջության վրա բացասական ներգործության կանխման համար: Օրենքը սահմանում է պետական լիազորված մարմինների, ինչպես նաև

թափոններ ստեղծոց կազմակերպությունների դերերը և պարտականությունները թափոնների կառավարման բնագավառում:

Այս օրենքի համաձայն քանդման, շինարարության, ապամոնտաժման և տեղադրման աշխատանքների արդյունքում ստեղծված թափոնները պետք է համապատասխան կերպով վերամշակվեն կամ հեռացվեն դրանց համար նախատեսված վայրերում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին ՀՀ օրենք (1995թ.)

Օրենքը սահմանում է գործունեության այն տեսակները, որոնք ենթակա են շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և էկոլոգիական փորձաքննության:

Համաձայն այս օրենքի Չարենցավան-3 ենթակայանում պլանավորվող աշխատանքները ենթակա չեն էկոլոգիական փորձաքննության:

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք (1998թթ.)

Համաձայն այս օրենքի Չարենցավան-3 ենթակայանում պլանավորվող աշխատանքները պահանջում են շինարարական թույլտվության առկայություն:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Չարենցավան-3 ենթակայանի հարևան համայնքները համարվում են ազդեցության ենթակա կողմեր շինարարության և շահագործման փուլերի ընթացքում: ԲԿԾ-ը հրապարակվելու է ԲԷՑ ՓԲԸ ինտերնետային կայքում և հասանելի է լինելու հանրության առաջարկությունների/դիտողությունների համար: Պլանավորվող աշխատանքների վերաբերյալ կարճ տեղեկատվությունը և հարցերի ու բողոքների համար կապի տվյալները կտեղադրվեն աշխատանքների իրականացման վայրում և/կամ դրա անմիջական մոտակայքում/համայնքում:

5. ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵՂՄՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԲԿԾ-ը ծածկում է բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ ծրագրի իրականացման հետևանքով, և ապահովում է մեղմման միջոցներ, որոնք ծածկում են ենթակայաններիում սարքավարումների բարելավման և նոր սարքավորումների տեղադրման արդյունքում առաջացող ազդեցությունները, այդ թվում աշխատողների առողջությանն ու անվտանգությունը, հողային աշխատանքները և կոշտ ու վտանգավոր թափոնների կառավարումը: Բնապահպանական կառավարման ծրագիրը, որն ընդգրկում է կառավարման ու մոնիտորինգի ծրագրերը՝ ըստ ծրագրի իրականացման փուլերի և աշխատանքների, ներկայացված է Հավելված 1-ում:

Թափոնների կառավարումը բնապահպանական ազդեցությունների մեղմման` ծրագրի համար մշակված պլանի ամենաբարդ խնդիրն է: Շինարարության փուլում նախատեսվող թափոնների գլխավոր տեսակներն են` (1) անվտանգ` քանդման հետևանքով առաջացած բեկորները, այլ տեսակի անվտանգ շինարարական թափոնը,

փորման աշխատանքների արդյունքում նյութերի ավելցուկը, հնացած սարքավորումները, և (2) վտանգավոր՝ կապարի մարտկոցները և մարտկոցային թթուները, տրանսֆորմատորների օգտագործված յուղերը, օգտագործված դողերը, ֆիլտրերը և շինարարական տեխնիկայի ու մեքենաների յուղերը:

Անվտանգ թափոնները՝ քանդման հետևանքով առաջացած բեկորները, այլ տեսակի անվտանգ շինարարական թափոնը, փորման աշխատանքների արդյունքում նյութերի ավելցուկը, կհեռացվեն պաշտոնապես հատկացված վայրեր: Շինարարության կապալառուին թափոնների հեռացման թույլտվությունը պետք է ստանա Չարենցավանի քաղաքապետարանից մինչև դրանց հեռացումը:

Հնացած սարքավորումները կպահվեն Չարենցավան-3 ենթակայանի տարածքում մինչև դրանց վաճառքը կամ հնարավոր կրկնակի օգտագործումը ԲԷՑ-ի կողմից: Ենթակայանի նախկին 220կՎ բաց բաշխիչ հրապարակում առանձնացված բացօդյա տարածքը կօգտագործվի որպես շահագործումից հանված սարքավորումների պահեստ:

Շինարարական տեխնիկայի և մեքենաների սպասարկումը կատարվելու է մասնագիտացված սպասարկման կենտրոններում, որոնք նաև ընդունում են օգտագործված դողեր, ֆիլտրերի ու յուղեր:

Չարենցավան-3 ենթակայանում տրանսֆորմատորային յուղերը գնահատվել են ՀՀ Բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրման կենտրոն» ՊՈԱԿ կողմից 2010թ.՝ օգտագործելով DEXSIL L2000 DX վերլուծող սարքը: Համաձայն գնահատման արդյունքների՝ Չարենցավան-3 ենթակայանում տրանսֆորմատորային յուղերը չեն պարունակում պոլիքլորացված բիֆենիլներ: Քանի որ ներկայումս չկա վերամշակման լիցենզավորված տեղական կայան, օգտագործված յուղերը պահվելու են այս ենթակայանում յուղերի համար նախատեսված տարածքում մինչև լիցենզավորված կապալառուի կողմից վերամշակումը:

Քանի որ շահագործումից հանված կապարի մարտկոցների և մարտկոցային թթվի թափումը աղբանոցում արգելված է, և քանի դեռ ներկայումս երկրում չկա վերամշակման/չեզոքացման լիցենզավորված տեղական կայան, թթու պարունակող մարտկոցները պետք է փոխադրվեն 30կմ հյուսիս-արևելք ԲԷՑ-ի արևելյան մասնաճյուղ, որ գտնվում է Մևան քաղաքում, և համապատասխան կերպով պահվեն պահեստում թթվի հեռացումից հետո, մինչև որ ստեղծվի նման տեսակի կայան: Մարտկոցները պետք է տեղափոխվեն փակ և կապարակնքված տարրաներում պատշաճ ծածկված և հնարավորինս անշարժ վիճակում: Դրանք տեղափոխող մեքենան պետք է ունենա համապատասխան արտաքին նշան, որ տեղափոխում է վտանգավոր բեռներ: Մարտկոցները պետք է պաշտպանվեն կարճ միացումից և փակ մեքենայով փոխադրման ընթացքում շարժվելուց: Պահեստը պետք է լինեն կողպվող և օդափոխվող սենյակ՝ չթափանցող նյութով պատված հատակով և մարտկոցների համար պահարաններով: Թթուն պահվելու է համապատասխան բաքերում, որոնք ունեն երկրորդային մեկուսիչ պատյան: ԲԷՑ-ի վերապատրաստում անձնակազմը կպատրաստի մարտկոցներն ու թթուն պահպանմանը: Թթի հետ վարվելու դեպքում

անձնակազմը պետք է օգտագործի համապատասխան անձնական պաշտպանիչ պարագաներ:

ԲԿԾ-ն կապ է սահմանում սույն հաշվետվությունում նշված կառավարման ու մեղմման միջոցների և ծրագրի շինարարության ու շահագործման փուլերի ընթացքում միջոցների ճիշտ իրականացման ու կառավարման միջև: Այն տալիս է մանրամասն տվյալներ այդ ազդեցությունների մեղմման միջոցների ու պարտականությունների, մեղմման ծախսերի և մեղմման միջոցների իրականացման ու արդյունավետության մոնիտորինգի ու վերահսկողության վերաբերյալ:

6. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՍԽԵՄԱՆԵՐԸ

ԲԷՑ-ը պատասխանատու է ԲԿԾ իրականացման համար: Բնապահպանական կառավարման ծրագրի աղյուսակը, քաղված այս ԲԿԾ-ից, ներառվելու է մրցութային փաթեթում և կազմելու է աշխատանքների կատարման պայմանագրերի մասը, որպեսզի կապալառուն տեղյակ լինի կիրառվելիք մեղմման միջոցների մասին, կարողանա ճիշտ գնահատել դրանց գծով ծախսը ու ներառել նախահաշվում և պահպանի ԲԿԾ-ով նախատեսված պարտավորությունները, ինչպես պայմանագրի ցանկացած այլ պայման:

Շինարարության կապալառու պարտականությունները

ԲԷՑ-ը պետք է Շինարարական թույլտվություն նախագծված ծախսատանքների համար: Եթե պահանջվեն այլ լրացուցիչ լիցենզիաներ, թույլտվություններ (օրինակ՝ թափոնների հեռացման և այլնի համար), շինարարական ընկերությունը պետք է ստանա դրանք իր կարողությունների շրջանակում:

ԲԿԾ իրականացման մոնիտորինգը

ԲԷՑ-ը ընդհանուր պատասխանատվություն է կրում ԲԿԾ իրականացման և աշխատանքների բնապահպանական մոնիտորինգի կազմակերպման համար: Աշխատանքների բնապահպանական մոնիտորինգը պետք է կատարվի սույն հաշվետվությունում ներկայացված Բնապահպանական կառավարման ծրագրին համապատասխան, և մոնիտորինգի արդյունքները պետք է արձանագրվեն բնապահպանական վերահսկողության ամսական հաշվետվություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխանատու
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Շինարարության աշխատողներին ապահովում համազգեստով և ԱՊՍ-ով - Շինարարական սարքավորումների շահագործման և ԱՊՍ օգտագործման կանոնների խիստ պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Չնման ընթացքում շինարարության աշխատողները կրում էին համազգեստներ և համապատասխան պաշտպանիչ հանդերձանք - Չնման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել 	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է	Շինարարության կապալառու
2. Քանդում և շինարարություն	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - Քանդումից առաջացած բեկորների պահում հսկվող գոտում և ցողում ջրով փոշու առաջացումը նվազեցնելու համար - Փոշու առաջացման ճնշում պնևմատիկ փորումների/պատերի քանդման ընթացքում շարունակական ցողման և/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման միջոցով - Շրջակա միջավայրը (մայթերը և ճանապարհները) պահել մաքուր բեկորներից փոշու առաջացումը նվեցնելու նպատակով 	<ul style="list-style-type: none"> - Չհսկվող տարածքում քանդման չցողված բեկորներ չեն հայտնաբերվել - Ոչ մի պնևմատիկ փորում /պատերի քանդում առանց շարունակական ցողման և/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման - Չնման ընթացքում շրջակա միջավայրը (մայթերը և ճանապարհները) եղել է մաքուր բեկորներից - Չնման ընթացքում աշխատանքների կատարման վայրում 	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է	Շինարարության կապալառու

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխանատու
		<ul style="list-style-type: none"> - աշխատանքների կատարման վայրում շինարարական նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Շինարարական տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները - Շինարարական մեքենաները անգործ չպահել 	<p>շինարարական նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել</p> <ul style="list-style-type: none"> - Չնման ընթացքում շինարարական տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց ավելորդ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել 		
	<p>Աղմուկի ստեղծում</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերի հարգում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում, և սարքավորումների՝ բնակելի տարածքներից հնարավորինս հեռու տեղադրում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - սարքավորումների կանխարգելիչ պահպանություն աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող շինարարական սարքավորում չի հայտնաբերվել - Չնման ընթացքում շինարարական սարքավորումները եղել են լավ տեխնիկական վիճակում - Չնման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել 	<p>Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է</p>	<p>Շինարարության կապալառու</p>

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխան-նառու
		անջատում			
3. Շինարարական նյութերով ապահովում	Ստանդարտին չհամապատասխանող նյութերի մատակարարում, ինչը կարող է ռիսկեր ստեղծել կառույցի անվտանգության և մարդկանց առողջության համար	Շինարարական նյութերի ձեռքբերում գրանցված մատակարարներից	Ծագման հավաստագրեր ունեցող ստանդարտ որակի շինարարական նյութերի մատակարարում	Զկա	Շինարարության կապալառու
4. Շինարարական նյութերի և թափոնների փոխադրում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Աղտոտում մեքենաների վատ տեխնիկական վիճակի և չծածկված բեռնատարների տեղաշարժի պատճառով - Աղմուկի և փոշու պատճառով տեղի բնակչությանը պատճառած անհարմարություն 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակը - Բեռների պաստառում - Փոխադրման հաստատված ժամերի և երթուղիների հարգում 	<ul style="list-style-type: none"> - Չմնման ընթացքում մեքենաները և տեխնիկական եղել են պատշաճ տեխնիկական վիճակում - Չմնման ընթացքում չծածկված բեռներ չեն հայտնաբերվել - աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատանք չի իրականացվում, որ կարող է խանգարել մոտակայքի բնակչությանը - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել 	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է	Շինարարության կապալառու
5. Շինարարական սարքավորումների շահագործումը աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Շրջակա միջավայրի աղտոտում արտանետումների և արտահոսքի պատճառով - Մոտակայքի բնակչությանը պատճառած 	<ul style="list-style-type: none"> - Շինարարական սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակը - Ոչ մի ավելորդ արտանետում - Ոչ մի վառելիքի և քսուքի արտահոսք - Աշխատանքային ժամերի 	<ul style="list-style-type: none"> - Չմնման ընթացքում մեքենաները և տեխնիկական եղել են պատշաճ տեխնիկական վիճակում - Հաստատված աշխատանքային ժամերից հետո ոչ մի 	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է	Շինարարության կապալառու

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխան-նառու
	անհարմարություն	պահպանում	շահագործվող ծանր տեխնիկա կամ մեքենա չի հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել		
6. Շինարարության սարքավորումների պահպանում	<ul style="list-style-type: none"> - Սարքավորումների շահագործման հետևաբով գետնային ջրերի և հողի աղտոտում նավթամթերքներով - Վնասում հրդեհի դեպքում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և շինարարական սարքավորումների վաճում շինարարության տարածքից դուրս կամ բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Շինարարական սարքավորումների լիցքավորում և քսում նախապես որոշված լցման կայաններում/սպասարկման կետերում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենայի վաճման արդյունքում ոչ մի ուղղակի արտահոսք դեպի ջրի ավազաններ - Շինարարության տարածքի սահմաններում կամ մոտակայքում գետնի վրա վառելիքի կամ քսանյութերի հետքեր չեն հայտնաբերվել - Հրդեհի մարման հիմնական միջոցների առկայություն շինարարության տարածքում 	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է	Շինարարության կապալառու
7. Հողային աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> - Բուսականության կորուստ հողի կուտակման պատճառով և մասնիկներով մակերեսային ջրերի աղտոտման մինիմալացում 	<ul style="list-style-type: none"> - Հողի վերին շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում հողի ռեկուլտիվացիայի համար - Փորված հողի ժամանակավոր պահում որոշված վայրերում - Փորված հողի հետ լցում ըստ անհրաժեշտության և ավելորդ զանգվածի հեռացում գրավոր հաստատված վայրեր 	<ul style="list-style-type: none"> - Ավելորդ նյութերի հեռացում մշտական պահման համաձայնեցված անվտանգ վայրեր առանց քայքայման վտանգի և ջրուղիների արգելափակման - Աշխատանքների ավարտից հետո շինարարության տարածքում ավելորդ նյութերի մնացորդների բացակայություն 	Կապալառուն պետք է դեպի վերջնական հեռացման վայրեր ավելորդ նյութերի փոխադրման ծախսը ներառի նախահաշվի մեջ	Շինարարության կապալառու

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխանատու
8. Անվտանգ շինարարական թափոնների ստեղծում	<ul style="list-style-type: none"> - Հողի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում - Պատահարներ շինարարության տարածքում շինարարական նյութերի և բեկորների ցրված մասնիկների պատճառով - Շինարարության տարածքի և շրջապատի գեղագիտական տեսքի վատացում 	<ul style="list-style-type: none"> - Շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորում հատուկ հատկացված վայրերում ենթակայանի ցանկապատված տարածքում - Չարենցավանի քաղաքապետարանից ստացված գրավոր համաձայնություն ավելորդ նյութերի ու շինարարական թափոնների հեռացման վերաբերյալ - Թափոնների ժամանակին հեռացումը պատշոնապես հատկացված վայրեր 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքների կատարման վայրում շինարարական թափոնը կուտակված են հատուկ վայրերում - Աշխատանքների կատարման վայրում շինարարական թափոնների ոչ մի ավելցում 	Կապալառուին պետք է թափոնների փոխադրման/ հեռացման ծախսը ներառի նախահաշվում	<p>Չարենցավանի քաղաքապետարան</p> <p>Շինարարության կապալառու</p>
9. Անվտանգ հեղուկ թափոնների արտադրություն	<ul style="list-style-type: none"> - Մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում - Աշխատանքների կատարման վայրում սանիտարական պայմանների վատացում 	Զուգարանների կազմակերպում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	Շինարարության տարածքում լավ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է	Շինարարության կապալառու
10. Օգտագործված տրանսֆորմատորային յուղերի և հնացած սարքավորումների հեռացումից թափոնների առաջացում	<ul style="list-style-type: none"> - Հողի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում - Պատահարներ շինարարության տարածքում շահագործումից հանված, ցրված նյութերի ու սարքավորումների պատճառով - Շինարարության աշխատանքների 	<ul style="list-style-type: none"> - Շահագործումից հանված սարքավորումների ժամանակավոր պահեստավորում Չարենցավան-3 ենթակայանի տարածքում հատուկ հատկացված վայրերում - Տրանսֆորմատորային յուղերի անվտանգ պահեստավորում Չարենցավան-3 ենթակայանում 	<ul style="list-style-type: none"> - Չարենցավան-3 ենթակայանում հայտնաբերված շահագործումից հանված սարքավորումները հավաքված են հատուկ վայրերում - փոխարինված տրանսֆորմատորային յուղերը ճիշտ կերպով պահեստավորված են Չարենցավան-3 	Ներառվելու է ենթակայանի շահագործման և պահպանության բյուջեում	<p>Շինարարության կապալառու</p> <p>ԲԷՅ</p>

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխան-նառու
	կատարման վայրի և շրջապատի գեղագիտական տեսքի վատացում		ենթակայանում		
11. Մարտկոցների փոխարինումից թունավոր թափոնների առաջացում	<ul style="list-style-type: none"> - Հողի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում հին սարքավորումներից թթուների արտահոսքի պատճառով - Վտանգներ շինարարության տարածք մտնող շինարարության աշխատողների և այլ մարդկանց առողջությանը - Վտանգներ թափոնների պահման վայրեր մտնող շինարարության աշխատողների և այլ մարդկանց առողջությանը 	<ul style="list-style-type: none"> - Թունավոր թափոնների (օգտագործված մարտկոցներ, մարտկոցային թթու և այլն) խիստ առանձնացում ենթակայանում ստեղծված այլ տեսակի թափոններից - Թունավոր թափոնների պատրաստում պահեստավորմանը՝ դրանք տեղավորելով կոնտեյներներում և պիտակավորելով (բաղադրության, հատկությունների և վարման կանոնների վերաբերյալ մասնամասներ) - տարածքի պատրաստում թունավոր թափոնների պահեստավորմանը (անթափանցելի հատակի ծածկի, պահարանների, օդափոխման համակարգերի, անվտանգության համակարգերի և այլնի տրամադրում) - Թունավոր թափոնների անվտանգ և ապահով պահեստավորում 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքների իրականացման վայրում հայտնաբերված վտանգավոր թափոնները առանձնացված են մյուս թափոններից - ԲԷՑ-ի արևելյան մասնաճյուղում հայտնաբերված վտանգավոր թափոնները պահված են անվտանգ կոնտեյներներում և կրում են բաղադրության, հատկությունների և վարման կանոնների վերաբերյալ պիտակներ 	Ներառվելու է ենթակայանի շահագործման և պահպանության բյուջեում	Շինարարության կապալառու ԲԷՑ
12. Շինարարության տարածքի ռեկուլտիվացիա և լանդշաֆտի	Լանդշաֆտի գեղագիտական արժեքի կորուստ ենթակայանի հիմնանորոգման	- շինարարության բազայի (եթե այդպիսին առկա է) և մերձատար ճանապարհների (եթե	- Կապալառուի դեմոբիլիզացիայից հետո աշխատանքային ճամբարի մնացորդների	Ներառված է ծրագրի ծախսերի մեջ	Շինարարության կապալառու

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխանատու
վերականգնում	պատճառով	աղյուսիք առկա են) ապամոնտաժում և տարածքների ներդաշնակեցում լանֆշաֆտի հետ - Շինարարության տարածքի և մշտական մերձատար ճանապարհների վերջնական մաքրում և տարածքի կանաչապատում	բացակայություն - Ժամանակավոր մերձատար ճանապարհները ներդաշնակեցված են բնապատկերի հետ և նպաստավոր պայմանների առկայություն բուսականություն վերականգնման համար - Շինարարության կանաչապատված տարածք		
13. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	Ուղղակի և անուղղակի վտանգներ հասարակական երթևեկությանը և հետիոտներին շինարարական աշխատանքների կողմից	- Ջգուշացնող նշանների, արգելքների և երթևեկության ուղղության շեղում - Երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում, հատկապես շինարարության տարածքի հասանելիության և մոտակա ծանր երթևեկության կառավարման համար: Անվտանգ անցումների ապահովում հետիոտների համար այն վայրերում, որտեղով անցնում են շինարարական մեքենաները - Աշխատանքային ժամերի հարմարեցում տեղի երթևեկությանը, օրինակ՝ խուսափում փոխադրման խոշոր աշխատանքներից երթևեկության պիկ ժամերին, - Տարածքում երթևեկության	- Ապահով շինարարական տարածք - Աշխատանքների հստակ տեսանելի տարածք, հանրության զգուշացում հնարավոր վտանգների վերաբերյալ - Շինարարության կարգավորված երթևեկություն -	Ներառված է ծրագրի ծախսերի մեջ	Շինարարության կապալառու

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխանատու
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
<p>1. Վտանգավոր թափոնների (յուղոտ լաթեր, յուղով աղտոտված ավազ) առաջացում</p>	<p>- Վտանգ ենթակայանի անձնակազմի առողջության համար - ենթակայանի տարածքի և շրջապատի հողերի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում</p>	<p>- Վտանգավոր թափոնների առանձնացում ենթակայանում առաջացած այլ տեսակի թափոններից - Համապատասխան կերպով կնքված և պահպանվող պահեստային տարածքի առկայություն վտանգավոր նյութերի համար - Համաձայնություն հատկապես լիցենզավորված մարմինների հետ ազգային օրենսդրությանը և լավագույն ազգային պրակտիկային համապատասխան վտանգավոր թափոնները տարածքից դուրս բերելու և վերամշակելու/հեռացնելու վերաբերյալ</p>	<p>Լավ սանիտարական պայմաններ ենթակայանում և դրա շուրջ</p>	<p>Ներառվելու է ենթակայանի շահագործման և պահպանության բյուջեում</p>	<p>ԲԷՑ</p>
<p>2. Ենթակայանի սարքավորումների շահագործում և պահպանում</p>	<p>Ենթակայանի տարածքի և շրջապատի հողերի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում</p>	<p>- Տարածքում թափված յուղերի դեմ գործիքների արկղի առկայություն թափված և արտահոսած յուղերը մաքրելու համար - Շահագործման ու պահպանության ընթացքում յուղի թափման և</p>	<p>Լավ սանիտարական պայմաններ ենթակայանում և դրա շուրջ</p>	<p>Ներառվելու է ենթակայանի շահագործման և պահպանության բյուջեում</p>	<p>ԲԷՑ</p>

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոց	Մեղմման հայտանիշ	Մեղմման արժեք	Մեղմման համար պատասխանատու
		արտահոսքի կանխում - Արտահոսած և պատահաբար թափված յուղերի ժամանակին մաքրում			
3. Պատրաստվածություն արտակարգ իրավիճակներին	Ենթակայանի շահագործման խափանում՝ անհարմարություն պատճառելով սպառողներին	Հրդեհի վերաբերյալ ահազանգման և հրդեհի տեղայնացման համակարգի և արտակարգ իրավիճակներում էլեկտրամատակարարման ռեզերվային համակարգերի առկայություն	Ենթակայանի հարթ շահագործում	Ներառվելու է ենթակայանի շահագործման և պահպանության բյուջեում	ԲԷՑ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը/ կամ շարունակա- կանությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
1. Շինարարական նյութերով ապահովում	Շինարարական նյութերի ձեռքբերում գրանցված մատակարարներից	Մատակարարի գրասենյակում կամ պահեստում	Նյութերի պիտակների և/կամ հավաստագրերի (եթե այդպիսիք առկա են) ստուգում	Մատակարարման պայմանագրերի կնքման ընթացքում	Ապահովել շինարարական նյութերի հուսալիությունն ու դրանց անվտանգությունը մարդու առողջության համար	ԲԷՑ
2. Շինարարական նյութերի և թափոնների փոխադրում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակը - Բեռների պատահում - Փոխադրման հաստատված ժամերի և երթուղիների հարգում 	<ul style="list-style-type: none"> - Շինարարության տարածք - Շինարարական նյութերի և թափոնների փոխադրման երթեր 	Ենթակայանին հարակից ճանապարհների զննում շարժման երթուղու ուղղությամբ	Ընտրանքային զննումներ աշխատանքային ժամերի ընթացքում	<ul style="list-style-type: none"> - սահմանափակել արտանետումներով հողի և օդի աղտոտումը - սահմանափակել աղմուկի և վիբրացիայի հետևանքով տեղական համայնքներին պատճառած անհարմարությունը - նվազագույնի հասցնել երթևեկության խափանումը 	ԲԷՑ Ճանապարհային ոստիկանություն
3. Փոշի	Օդափոխությունը տեղում	Շինարարության տարածք և մերձատար ճանապարհ	Տեսողական զննում	Կրկնվող	Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար	ԲԷՑ

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը/ կամ շարունակա- կանությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
4. Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերին հետևում - Մեքենաների և տեխնիկայի տեխնիկական վիճակը - Աղմուկի մակարդակը (բողոքների դեպքում) 	Շինարարու- թյան տարածք	<ul style="list-style-type: none"> - Տեսողական զննում - Աղմուկի մակարդակի չափում գործիքներով (բողոքների դեպքում) 	<ul style="list-style-type: none"> - Կրկնվող - Բողոքից հետո երկու հատվածի ընթացքում 	Նվազեցնել անհարմարությունն երը անձնակազմի և հարևան համայքների համար	ԲԷՑ
5. Շինարարության սարքավորումների պահպանում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և շինարարական սարքավորումների լվացում շինարարության տարածքից դուրս կամ բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Շինարարական սարքավորումների լիցքավորում և քսում նախապես որոշված լցման կայաններում/սպասարկման կետերում 	Շինարարու- թյան տարածք	Աշխատանքների զննում	Ընտրանքային զննումներ աշխատանքային ժամերի ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից - Ժամանակին տեղայնացնել և նվազեցնել հնարավոր վնասը 	ԲԷՑ
6. Հողային աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> - Հողի վերին շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում հողի ռեկուլտիվացիայի համար - Փորված հողի ժամանակավոր պահում որոշված վայրերում - Փորված հողի հետ լցնում ըստ անհրաժեշտության և ավելորդ զանգվածի հեռացում գրավոր հաստատված վայրեր 	Շինարարու- թյան տարածք	Աշխատանքների զննում	Հողային աշխատանքների ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Սահմանափակել բուսականության կորուստը հողի կուտակման հետևաքով և մինիմալացնել մակերեսային ջրային ավազանների աղտոտումը մասնիկներով - Սահմանափակել մակերեսային և 	ԲԷՑ

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը/ կամ շարունակա- կանությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
					ստորգետնյա ջրերի աղտոտումը աղտոտված հողով	
7. Անվտանգ շինարարական թափոնների ստեղծում	<ul style="list-style-type: none"> - Շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորում հատուկ հատկացված վայրերում ենթակայանի ցանկապատված տարածքում - Թափոնների ժամանակին հեռացումը պատշոնապես հատկացված վայրեր 	<p>Շինարարու- թյան տարածք</p> <p>Թափոնների հեռացման վայր</p>	Աշխատանքների զննում	Պարբերաբար շինարարության ընթացքում և դրա ավարտից հետո	<ul style="list-style-type: none"> - Հողի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտման կանխում - Ենթակայանի տարածքում շինարարական նյութերի և բեկորների ցրված մասնիկների պատճառով պատահարներից խուսափում - Շինարարության տարածքի և շրջապատի գեղագիտական տեսքի պահպանում 	ԲԷՑ Չարենցա- վանի քաղաքա- պետարան
8. Հեղուկ թափոնների արտադրում	- Շինարարության տարածքում զուգարանների կազմակերպում	Շինարարու- թյան տարածք	Աշխատանքների զննում	Շինարարության ողջ ժամանակա-	- Մակերեսային և ստորգետնյա	Շինարարու- թյան

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը/ կամ շարունակա- կանությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
	և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան			հատված	ջրերի աղտոտման կրճատում	կապալառու
9. Հնացած սարքավորումների հեռացումից թափոնների առաջացում	- Ապամոնտաժված սարքավորումների ժամանակավորման պահեստավորում Չարենցավան-3 ենթակայանում հատուկ հատկացված վայրում	Չարենցավան-3 ենթակայանի հողակտոր	Աշխատանքների զննում	Պարբերաբար շինարարության ընթացքում և դրա ավարտից հետո	- Հողի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտման կանխում - Ենթակայանի տարածքում շինարարական նյութերի և բեկորների ցրված մասնիկների պատճառով պատահարներից խուսափում - Շինարարության տարածքի և շրջապատի գեղագիտական տեսքի պահպանում	ԲԷՑ
10. Տրանսֆորմատորա- յին յուղերի փոխարինումից թափոնների առաջացում	- Յուղերի պահեստավորման պայմանները Չարենցավան-3 ենթակայանում	Չարենցավան-3 ենթակայան	Տեսողական զննում	- Յուղերի փոխադրման ընթացքում - Պարբերաբար յուղերի պահեստավորման ընթացքում	Հողերի ու ջրի աղտոտումից խուսափում	ԲԷՑ
11. Մարտկոցների փոխարինումից թունավոր թափոնների առաջացում	- Թունավոր թափոնների (օգտագործված մարտկոցներ, մարտկոցային թթու և այլն) խիստ առանձնացում ենթակայանում ստեղծված այլ	- Չարենցավան-3 ենթակայանից մինչև ԲԷՑ արևելյան մասնաճյուղ	Տեսողական զննում	- Թունավոր թափոնների փոխադրման ընթացքում - Պարբերաբար	Հողերի ու ջրի աղտոտումից խուսափում	ԲԷՑ Բնապահպա- նության նախարարու-

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը/ կամ շարունակա- կանությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
	<p>տեսակի թափոններից</p> <ul style="list-style-type: none"> - Թունավոր թափոնների պատրաստում պահեստավորմանը՝ դրանք տեղավորելով կոնտեյներներում և պիտակավորելով (բաղադրության, հատկությունների և վարման կանոնների վերաբերյալ մասնամասներ) - տարածքի պատրաստում թունավոր թափոնների պահեստավորմանը (անթափանցելի հատակի ծածկի, պահարանների, օդափոխման համակարգերի, անվտանգության համակարգերի և այլնի տրամադրում) - Թունավոր թափոնների անվտանգ պահեստավորում 	<p>փոխադրման երթուղի</p> <ul style="list-style-type: none"> - ԲԷՑ արևելյան մասնաճյուղի տարածք 		<p>թունավոր թափոնների պահեստավորման ընթացքում</p>		<p>թյուն</p>
<p>12. Շինարարության տարածքի ռեկուլտիվացիա և լանդշաֆտի վերականգնում</p>	<ul style="list-style-type: none"> - Շինարարության բազայի (եթե այդպիսին առկա է) և մերձատար ճանապարհների (եթե այդպիսիք առկա են) ապամոնտաժում և տարածքների ներդաշնակեցում լանդշաֆտի հետ - Շինարարության տարածքի և մշտական մերձատար ճանապարհների վերջնական մաքրում և տարածքի կանաչապատում 	<p>Շինարարու- թյան տարածք, մերձատար ճանապարհներ</p>	<p>Աշխատանքների զմնում</p>	<p>Շինարարության վերջնական հատվածում</p>	<p>Ենթակայանի հիմնանորոգման պատճառով Լանդշաֆտի գեղագիտական արժեքի կորստի կրճատում</p>	<p>ԲԷՑ</p>

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը/ կամ շարունակականությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատասխանատու մնիտորինգի համար)
13. Աշխատողների առողջություն և անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - Շինարարության աշխատողների կողմից համազգեստի և ԱՊՍ կրումը - Շինարարական սարքավորումների շահագործման և ԱՊՍ օգտագործման կանոնների խիստ պահպանում 	Շինարարության տարածք	Աշխատանքների գնում	Աշխատանքների ողջ ժամանակահատված	Կրճատել շինարարների վնասվածքների և պատահարների հավանականությունը	ԲԷՑ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ						
1. Վտանգավոր թափոնների (յուղոտ լաթեր, յուղով աղտոտված ավազ) կառավարում	<ul style="list-style-type: none"> - Վտանգավոր թափոնների առանձնացում ենթակայանում առաջացած այլ տեսակի թափոններից - Համապատասխան կերպով կնքված և պահպանվող պահեստային տարածքի առկայություն վտանգավոր նյութերի համար - Համաձայնություն հատկապես լիցենզավորված մարմինների հետ ազգային օրենսդրությանը և լավագույն ազգային պրակտիկային համապատասխան վտանգավոր թափոնները տարածքից դուրս բերելու և վերանշակելու/հեռացնելու վերաբերյալ 	Ենթակայանի տարածք	<ul style="list-style-type: none"> - Ենթակայանի գնում - Լիցենզավորված մարմնի հետ թափոնների վերացման ու հեռացման վերաբերյալ համաձայնագրի առկայության ու վավերության ստուգում 	Ենթակայանի շահագործման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Լավ սանիտարական պայմանների պահպանում ենթակայանում - Հողի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտման սահմանափակում 	Բնապահպանության նախարարություն
2. Ենթակայանի սարքավորումների շահագործում և պահպանում	- Տարածքում թափված յուղերի դեմ գործիքների արկղի առկայություն թափված և արտահոսած յուղերը մաքրելու համար	Ենթակայանի տարածք	Ենթակայանի տարածք գնում	Կայանի շահագործման ողջ ընթացքում	- Տարածք մտնող անձնակազմի և այլ մարդկանց առողջության համար	Բնապահպանության նախարարություն

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվելիք պարամետրը)	Ինչպե՞ս է (հսկվում պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը/ կամ շարունակա- կանությունը)	Ինչու՞ է (հսկվում պարամետրը)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
	<ul style="list-style-type: none"> - Շահագործման ու պահպանության ընթացքում յուղի թափման և արտահոսքի կանխում - Արտահոսած և պատահաբար թափված յուղերի ժամանակին մաքրում 				<ul style="list-style-type: none"> վտանգների կանխում - Սարքավորումների շահագործման ու պահպանության հետևանքով նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից խուսափում - Հրդեհի դեպքում վնասի ժամանակին տեղայնացում ու նվազեցում 	Էներգետիկայի ու բնական պաշարների նախարարություն
3. Էլեկտրական և մագնիսական դաշտ	Էլեկտրական և մագնիսական դաշտի ինտենսիվություն	Շահագործման տարածքում ու ցանկապատի մոտ	Էլեկտրականության չափիչ ու Գաուսյան չափիչ	Վեց ամիսը մեկ	Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար	ԲԷՑ Առողջապահության նախարարություն
4. Պատրաստվածություն և արտակարգ իրավիճակներին	Հրդեհի վերաբերյալ ահազանգման և հրդեհի տեղայնացման համակարգի և արտակարգ իրավիճակներում էլեկտրամատակարարման ռեզերվային համակարգերի առկայություն	Ենթակայանի տարածք	Պարբերական ստուգումներ	Կայանի շահագործման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար - Ենթակայանի շահագործման խափանումից խուսափում 	Էներգետիկայի ու բնական պաշարների նախարարություն Արտակարգ իրավիճակներին նախարարություն